ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

ք.Երևան «23» 06 2014թ. № 588-Ա

ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ, ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վիճակագրական պետական խորհրդի 2002 թվականի օգոստոսի 12-ի N 173-Ն որոշմամբ և Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի ստորաբաժանումների և ստանդարտացման, չափագիտության և համապատասխանության գնահատման ոլորտներում աշխատանքները իրականացնող կազմակերպությունների միջև հաշվետվությունների ներկայացման ընթացակարգը սահմանելու նպատակով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության «Հավատարմագրման ազգային մարմին» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսի 5-ը Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի որակի ենթակառուցվածքի և տեխնիկական կանոնակարգման վարչություն և Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության պետական տեսչություն ներկայացնել եռամսյակային տեղեկատվություն հավատարմագրված փորձարկման լաբորատորիաների և սերտիֆիկացման մարմինների վերաբերյալ՝ համաձայն ձև 1-ի:

2. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության «Ստանդարտների ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերությանը՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսի 5-ը Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի որակի ենթակառուցվածքի և տեխնիկական կանոնակարգման վարչություն ներկայացնել եռամսյակային տեղեկատվություն ստանդարտացման ոլորտում իրականացված գործունեության վերաբերյալ՝ համաձայն ձև 2-ի:

3. Առաջարկել համապատասխանության գնահատման բնագավառում սերտիֆիկացման մարմիններին և փորձարկման լաբորատորիաներին՝

1) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսի 5-ը Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի որակի ենթակառուցվածքի և տեխնիկական կանոնակարգման վարչություն ներկայացնել եռամսյակային տեղեկատվություն համապատասխանության գնահատման աշխատանքների վերաբերյալ համաձայն ձև 3-ի,

2) երկօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության պետական տեսչություն ներկայացնել տեղեկատվություն համապատասխանության գնահատման մերժումների վերաբերյալ՝ հիմնավորելով մերժման պատճառները:

4. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի որակի ենթակառուցվածքի և տեխնիկական կանոնակարգման վարչությանը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության վիճակագրական պետական խորհրդի 2002 թվականի օգոստոսի 12-ի N 173-Ն որոշմամբ սահմանված ձևի՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսի 10-ը Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն ներկայացնել եռամսյակային տեղեկատվություն՝ համաձայն ձև 4-ի:

5. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարի 2003 թվականի հունիսի 9-ի «Ստանդարտացման, չափագիտության և համապատասխանության գնահատման ոլորտներում աշխատանքները արդյունավետ կազմակերպելու մասին» թիվ 79 հրամանը:

6. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի տեղակալ Գառնիկ Բաղալյանին:

ԿԱՐԵՆ ՃՇՄԱՐԻՏՅԱՆ

Ձև 1

Տեղեկատվություն հավատարմագրված ՀՀ փորձարկման լաբորատորիաների և սերտիֆիկացման մարմինների վերաբերյալ

Հ/Հ	Նույնականացման նշանագիրը (կոդը), գրանցահամարը	Փորձարկման լաբորատորիայի անվանումը, հասցեն, ղեկավարը, հեռախոսը	Սերտիֆիկացման մարմնի անվանումը, հասցեն, ղեկավարը, հեռախոսը	Հավատարմագրման ոլորտը	Հավատարմագրման վկայագրի գործողության ժամկետը
1	2	3	4	5	

Ձև 2

Տեղեկատվություն ստանդարտացման ոլորտում իրականացված գործունեության վերաբերյալ

Հ/Հ	Ցուցանիշի անվանումը	Չափման միավորը	Ժամանակահատվածը	Տարեսկզբից՝ աճող թվերով
1	2	3	4	5
1.1	Ընդունված և պետական գրանցամատյանում գրանցված ազգային ստանդարտների քանակը	հատ		
1.1.1	այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության ստանդարտների քանակը	հատ		
1.1.2	Միջպետական ստանդարտների քանակը, այդ թվում Ռուսաստանի Դաշնության ստանդարտները	հատ		
1.1.3	Միջազգային և եվրոպական ստանդարտների քանակը	հատ		
1.2	Պետական գրանցում ստացած տեխնիկական պայմանների (ՏՊ) քանակը	հատ		
1.3	Թողարկված տեղեկատվական նյութերի քանակը (ստանդարտների կատալոգ, տեղեկատու և այլն)	հատ		

Ձև 3

Տեղեկատվություն համապատասխանության գնահատման աշխատանքների վերաբերյալ

---------- կողմից 201 թ. եռամսյակի ընթացքում տրված
(կազմակերպության անվանումը) սերտիֆիկատները և հայտարարագրերը

Հ/Հ	Սերտիֆիկատներ և հայտարարագրեր	Չափման միավոր (հատ)
1.	Տրված համապատասխանության սերտիֆիկատներ, ընդհամենը	
1.1	Այդ թվում՝ ներմուծվող արտադրանքի համար	
1.2	ՀՀ տարածքում արտադրանքի համար, ընդհամենը	
1.2.1	Այդ թվում՝ սերիական արտադրանքի համար	
1.2.2	Խմբաքանակի համար	
1.2.3	Այդ թվում՝ արտահանման համար	
2.	Մերժված հայտեր, ընդհամենը	
2.1	Այդ թվում՝ անհամապատասխանության պատճառով	
3.	Գրանցված հայտարարագրեր, ընդհամենը	
3.1	Այդ թվում՝ ներմուծվող արտադրանքի համար	
3.2	ՀՀ-ում արտադրվող արտադրանքի համար	

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

201 թվականի -րդ եռամսյակի ընթացքում անհամապատասխանության պատճառով չսերտիֆիկացված արտադրանքների ցանկ

Հ/Հ	Արտադրանքի անվանումը	Սերտիֆիկացնող մարմնի անվանումը	Քանակը (չափման միավորը)	Անհամապատասխանության ցուցանիշը	Հայտի համարը, ամսաթիվը	Երկիրը, արտադրող ձեռնարկություն	Հայտատուի անունը, հասցեն

Ձև 4

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության ստանդարտացման, համապատասխանության գնահատման և հավատարմագրման ոլորտներում գործունեության հիմնական ցուցանիշները

Հ/Հ	Ցուցանիշի անվանումը	Չափման միավորը	201 թ. --- եռամսյակ	Տարեսկզբից՝ աճող թվերով
1	2	3	4	5
	ա.Ստանդարտացման ոլորտում			
1.1	Ընդունված և պետական գրանցամատյանում գրանցված ազգային ստանդարտների քանակը	հատ		
1.1.1	այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության ստանդարտների քանակը	հատ		
1.1.2	Միջպետական ստանդարտների քանակը, այդ թվում Ռուսաստանի Դաշնության ստանդարտները	հատ		
1.1.3	Միջազգային և եվրոպական ստանդարտների քանակը	հատ		
1.2	Պետական գրանցում ստացած տեխնիկական պայմանների (ՏՊ) քանակը	հատ		
1.3	Թողարկված տեղեկատվական նյութերի քանակը (ստանդարտների կատալոգ, տեղեկատու և այլն)	հատ		
	բ. Համապատասխանության գնահատման ոլորտում			
2.1	Տրված համապատասխանության սերտիֆիկատների քանակը	հատ		
2.1.1	այդ թվում՝ ներմուծվող արտադրանքի համար	հատ		
2.1.2	արտահանվող արտադրանքի համար	հատ		
2.2	Արտադրանքի սերտիֆիկացման մերժված հայտերի քանակը, ընդամենը	հատ		
2.2.1	այդ թվում՝ արտադրանքի անհամապատասխանության պատճառով	հատ		
	գ. Հավատարմագրման ոլորտում			
3.1	ՀՀ տարածքում հավատարմագրված սերտիֆիկացման մարմինների քանակը	հատ		
3.2	ՀՀ տարածքում հավատարմագրված լաբորատորիաների քանակը, ընդամենը	հատ		
3.2.1	այդ թվում՝ տեխնիկապես իրավասու և անկախ	հատ		
3.2.2	տեխնիկապես իրավասու	հատ		

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

201 թվականի -րդ եռամսյակի ընթացքում անհամապատասխանության պատճառով չսերտիֆիկացված արտադրանքների ցանկ

Հ/Հ	Արտադրանքի անվանումը	Սերտիֆիկացնող մարմնի անվանումը	Քանակը (չափման միավորը)	Անհամապատասխանության ցուցանիշը	Հայտի համարը, ամսաթիվը	Երկիրը, արտադրող ձեռնարկություն	Հայտատուի անունը, հասցեն